

գեղարվեստական արժեքներ)

Դիանա Համբարձումյան

Ուիլյամ Ֆոլքենբերն այս սակավաթիվ գրողներից է։

Այնուհանդերձ, փաստ է, որ համաշխարհային գրականագիտական միտքը բազմաբնույթ ուսումնասիրություններ է կատարել ֆոլքներ ինքնատիպ երևույթի (մարդու և գրողի) ընկալման առնչությամբ, իսկ նրան տրված գնահատություններն ու վերլուծությունները, մեկնաբանություններն այնքան ծանրակշիռ ու համապարփակ գիտական աշխատություններ են, որ թվում է թե նոր խոսքի փորձն ապարդյուն ճիգ է: Այսպես թվում է միայն այնքան ժամանակ, քանի դեռ քեզ ճնշում է Ու. Ֆոլքների թողած հսկայածավալ գրական ժառանգությունը. մոտ 200 անուն անգլերեն լեզվով հրատարակված ստեղծագործություններ, այդ թվում 17 վեպ ու 7 հատընտիր ժողովածուներ, որոնք բոլորն էլ հրատարակվել են գրողի կենդանության օրոք և ապա բազմիցս վերահրատարակվել մահից հետո, պատմվածքների ու ակնալիկների 16 առանձին ժողովածուներ, պիեսներ ու սցենարներ, մամուլում հրատարակված 85 պատմվածքներ, 10 ժողովածուներ, որ ընդգրկում են Ֆոլքների քննախոսական, հրապարակախոսական հոդվածները, ելույթները – Նոբելյան մրցանակ ստանալու առիթով նրա հնչեցրած հանրահայտ խոսքը, Վիլհելմյայի համալսարանում կարդացած դասախոսությունները, Ճապոնիայի Նագանո քաղաքում տված հարցազրույցները, Ճապոնիայի երիտասարդներին հղած ուղերձները, բազմաթիվ այլ հարցազրույցներ ու նամակներ, էսսեներ, պարբերական մամուլում ու գրքերում հրատարակված մոտ 45 բազմաբնույթ տեքստեր, գրախոսականներ, կարծիքներ, ստեղծագործական կյանքի վաղ շրջանում (1919 – 22 թթ) համալսարանական ամսագրերում ու մամուլում լույս տեսած 20 և ավելի բանաստեղծություններ, բանաստեղծությունների 3 ժողովածու, և այս ամենը ստեղծագործական կյանքի ավելի քան 40 (1919 – 62 թթ.) և այսերկրային կյանքի 65 (1897 – 1962 թթ.) տարիների ընթացքում:

Մոսկ քվարկումը շփոթեցնում ու մանրագնին աշխատանք է պարտադրում, սակայն պատկառազորու է ոչ միայն Ֆոլքների ժառանգությունը, այլև մինչ այսօր նրա մասին ստեղծված բազմախատոր գրականագիտությունը՝ ֆոլքներագիտության ժառանգությունը: Ըստ հանրահայտ մատենագիտական տվյալների՝ մինչև մեր դարի 80-ական թվականների կեսը Ֆոլքների մասին անգլերեն լեզվով հրատարակվել է մոտ 1066 գրականագիտական հոդված ու գրախոսական (մեծ մասամբ ԱՄՆ-ի տարբեր նահանգներում, ինչպես նաև Փարիզում, Մյունխենում, Վարշավայում, Տոկիոյում, Հեյդելբերգում, Ստոկհոլմում և այլուր): Իսկ ռուսերեն լեզվով, սկսած 30-ական թվականներից մինչև 80-ական թթ., հրատարակվել են մոտ 150 և ավելի գրականագիտական ուսումնասիրություններ, որոնց թվում՝ մի շարք մատենագիտական նյութեր, գիտական առեմախոսություններ, մենագրություններ և առանձին գրքերում տեղ գտած գրաքննադատական, վերլուծական հոդվածներ, ակնարկներ, մամուլում հրապարակված գրախոսականներ: Ռուս գրական կյանքում Ու. Ֆոլքների հանդեպ եղած հարաճուն հետաքրքրությունն ընդգծելու նպատակով վերն աավածին ավելացնենք մի կարևոր փաստ ևս՝ Ֆոլքների գրական ժառանգության թարգմանությունը ռուսերեն: Այսօր վստահորեն կարելի է ասել, որ ռուս թարգմանական դպրոցը Ֆոլքների առնչությամբ էլ ապացուցել է իր անխոնջ նվիրումը գործին ու այդ ասպարեզում ձեռք բերած բարձր մասնագիտական հմտություններն ու կարողությունները: Վկան կը-

կին 30-ական թթ.-ից երևան եկած բազմաքանակ թարգմանությունները, որոնց թվում՝ 13 վեպ, պատմվածքների 4 ժողովածու, «Դեքվիեն միանձնուհուն» պիեսը, (որը ֆրանսերեն է թարգմանել Ալբեր Զամյուն, իսկ ֆրանսերենից ռուսերեն է թարգմանել Տ. Երոֆեևը), զանազան ժողովածուներում ու մամուլում լույս տեսած շուրջ 45 պատմվածք և ֆոլքլորյան բազմաթիվ հարցազրույցներ, հրապարակախոսական, քննադատական հոդվածներ ու զեկույցներ:

Այլ ամենը վերստին հաստատում է համաշխարհային ֆոլքներագիտության գոյությունը և նրանցով որս օրականացածների ու քաղաքացիների հիացմունքի արժանի երախտիքը:

Եվ ուրեմն, կրկին ծառանում է հարցը. արդյո՞ք սպառնալից է նյութը, հայերեն լեզվով ի մի բերելով ողջ եղածը՝ կարելի՞ Է ասվածին նոր բան ավելացնել: Անշուշտ, այո՞, և սկզբի համար ոգևորող է հենց այն փաստը, որ մեծաքանակ ու ծանրակշիռ ամերիկյան գրականագիտական ուսումնասիրություններն ամենևին էլ չեն խանգարել (ավելին, հիմք են ծառայել ու նպաստել), որ ռուս գրական իրականության մեջ նախաձեռնվի Ֆյոքմերի նորովի բնումը: Ուստի հայ գրականագիտության պրպտումները ֆյոքմերյան համապարփակ ստեղծագործության մեջ անպտուղ չեն կարող լինել:

Ռուս գրական կյանքում Ֆոլքների հանդեպ վերոհիշյալ հետաքրքրությունը պայմանավորված է եղել ո՛չ միայն և ո՛չ այնքան զրոտի հանճարի ուժով, որքան ռուս և ամերիկյան գրականություններում (տվյալ դեպքում՝ Ֆոլքների և Դոստոևսկու միջև) ակնհայտ գրական առնչություններով։ Այս խնդրի քննությունը բազմաթիվ ուսումնասիրությունների է արժանացել ու վերստին հաստատում է, որ գրականության մեծերի ժառանգությունն անսպառ աղբյուր է այն ուսումնասիրողների համար, իսկ որ գրական առնչությունները մեծերի գոյության դեպքում, անխուսափելի են, ուստի և բազմաթիվ քննությունների հնարավորություն ընձեռող, ամերկյայելի են։ Ահա այսպիսի հիմնավորմամբ էլ ապագայում մեր ուշադրությունը կսեռենք հայ գրական կյանքում Ֆոլքներյան բազմաբնույթ արձագանքներին (թարգմանություններ, առնչություններ, ազդեցության տպավորություն ստեղծող գրական արտացոլումներ), իսկ ներկա հոդվածում կանդրադառնանք Ու. Ֆոլքների երկերի հայերեն թարգմանություններին՝ մասնավորապես առաջին թարգմանությանը։

Գեղարվեստական գրականության թարգմանությունն ինքնին բարդ արվեստ է: Առավել բարդ է այն, երբ գրական երկը այսպես կոչված «դժվար գրականության» նմուշ է: Իսկ գրականությունը «դժվար» է որակվում նախ և առաջ բովանդակության, ապա և ձևի նորարարական ինքնատիպության իմաստով: Բովանդակության առումով կարևորվում է ոչ այնքան սյուժեն, որքան թեման: Չկի առումով էական է թե՛ կառուցվածքային ուրվագիծը, թե՛ գեղագիտական տպավորությունն ապահովող բառա-յին և շարահյուսական բազմազան արտահայտչամիջոցների՝ ոճական երանգների, հարակրկնու-թյունների գործածությունը, նորովի կիրառումը, որոնք Ու. Ֆոլքների երկերի հայերեն թարգմանու-թյունների ուսումնասիրման համատեքստում մանրամասն քննության կարիք ունեն:

Ու Ֆոլքները 20-րդ դարի ամերիկյան գրականության ինքնատիպ արձակագիրներից է: Նրա անցած գրական ուղին կարելի է նկարագրել որպես «որոշումների սայթաքում բարձունք»: Ու. Ֆոլքներն ինքը գուցեև դեմ լիներ «սայթաքում բարձունք» ձևակերպմանը, քանզի «որոշումներն» արդեն ենթադրում են ուղու որպիսությունն ու վերջնագիծը: Բայց և այնպես, Ու. Ֆոլքների ստեղծագործության հետ առնչվելու երկար միջոցն ու մանրագնին քննությունը մեզ իրավունք են տալիս գտնել նրա առնչությանը անվարան գործածել վերոբերյալ բնութագրումը:

Եվ ուրեմն՝ գրողի «որոշումները» նրան հաճախ ձախողման են հանգեցրել, որոնք, այնուհանդերձ, վերջնահաշվում ճշմարիտ ձեռքբերումներ են: Ու. Ֆոլքների ստեղծածի առնչությամբ վաղուց այլևս ստույգ է «բարձրարժեք զրականության» հետ մեր հանդիպումը: Իսկ ամեն թարգմանչի պարտքը և գերագույն ճիգն է արժանի լինել գրողի հետ մեկտեղ քայլելու պատվին: Այո՛, տվյալ դեպքում Ու. Ֆոլքների մեծության գրողի երկերի՝ թարգմանությունն անչափ արժանապատիվ գործ է, բայց և այն պիտի վստահապար փորձաքար, որն ավելի քան պարտավորեցնող է:

Խոստում է այն փաստը, որ 1955 թ. գրողի փառքն արդեն այնքան էր աճել, որ նույնիսկ պետական այրերը չէին երկնչում օգտագործել նրա հեղինակությունը՝ Միացյալ Նահանգների խարիչվող վարկը օտար երկրների մտավորականության շրջանում բարձրացնելու նպատակով։ Եվ ահա, երբ Ու. Ֆոլքները 1955 թվականի հուլիսին Ճապոնիայում էր, հաճելիորեն զարմացավ՝ իմանալով, որ գրեթե բոլոր իր վեպերը թարգմանված են ճապոներեն։ Նազանոյի համալսարանի ուսանողների և դասախոսների հետ հանդիպումների ընթացքում նա զգում էր, թե որքան մեծ էր Ճապոնացիների հետաքրքրությունն իր գրականության հանդեպ, ուստի մեծ սիրով և պաշտասխանանատվությամբ էր պատասխանում նրանց այն բոլոր հարցերին, որոնք առանձնակիորեն առնչվում էին իր «Գովարամարս» գրականության նրբություններին։

Եվ ուրեմն, ճապոնացիները հընթացս թարգմանում էին ամերիկացի «աղմկաբեր նորարարի» երկերը:

Ինչպիսի՞ն էր ֆոլքլորյան գրականության արժանազանը ռուս իրականության մեջ, որով և կարող էր պայմանավորվել նրա քարգնամությունը հայերեն: 1934 թվականին առաջին անգամ ռուսերեն քարգնամվեց Ֆոլքլորի «Երբ գալիս է գիշերը» պատմվածքը (Քարգնամիչ՝ Օ. Խոլմսկայա)1: Այնուհետև հաջորդ երկու տարիներին՝ 1935 և 1936 թվականներին, նույնպես քարգնամվեցին և հրատարակվեցին մեկական պատմվածքներ. «Գրողն իր տաը» (Քարգնամիչ՝ Վալ. Ստեմիչ) և «Հաղթանակ» (Քարգնամիչ՝ Յու. Մավելս)2: 1937 թվականի օգոստոսի 15-ին «3a pyбexom»-ում տպագրվեց քարգնամական մի հատված «Աշտարակ» («Pylon») վեպից3:

Եվ տասը տարի անընդմեջ համատարած լուրջություն էր, որն անշուշտ, դյուրին բացատրելի է այդ տարիների Ռուսաստանում գրականության, մշակույթի համար ստեղծված, մեղմ ասած, անբարենպաստ պայմաններով: Սկզբում՝ մոլեգնող «անհատի պաշտամունքի» ավերածությունները, ապա՝ երկրորդ համաշխարհային պատերազմի դաժան կնիքը: 1946 թվականին քարգնամվեց ևս մի պատմվածք և հրատարակվեց «Ամերիկա»-ում4: Ետպատերազմյան Ռուսաստանում շատ խոստում էր «Երկու գինվոր» պատմվածքի քարգնամությունը, որը, սակայն, Ու. Ֆոլքների ստեղծագործության միակ տպագրված քարգնամությունն էր գրեթե 20 տարիների ընթացքում: 1957-58 թթ. սկսած արդեն պարբերաբար լույս տեսավ Ու. Ֆոլքների երկերի ռուսերեն քարգնամությունների գրեթե ողջ ընտրանին: Ժամանակներն արդեն փոխվել է բարենպաստ էին գրականությանը զբաղվելու, քարգնամելու, ուսումնասիրություններ կատարելու առումով, և հարկ է արժանին մատուցել ռուս ֆոլքներագիտությանը, որն արդեն կես դար է, ինչ լրացնելով բացթողմը՝ ստեղծել է Ֆոլքների երկերի գրականագիտական խորագին ռուսումնասիրություններ և քարգնամական բազմաքանակ ու արժեքավոր գործեր:

Դառնանք հայ իրականությանը: Բոլորովին էլ գաղտնիք չէ այն փաստը, որ բացառությամբ օտար լեզուների իմացությամբ օժտված մի քանի տաղանդաշատ քարգնամիչների (Հովհաննես Խան Մասեհյան, Արշակ Չոպանյան, Խ. Դաշտենց և այլոք), 19-ից մինչև 20-րդ դարի կեսը հայ քարգնամական դպրոցում քարգնամիչների գերակշիռ մասն օգտվում էր միջնորդ լեզվից՝ ռուսերենից, որպեսզի հայացներ համաշխարհային գրականության մեծերին: Թարգմանության այս ձևն, անշուշտ, վերջին մի քանի տասնամյակներում այլևս լայն կիրառություն չունի, և մեկընդմիջտ ընդունելի է, որ չմիջնորդավորված քարգնամությունը շատ ավելի արժեքավոր ու գնահատելի պիտի լինի, քանզի այն առավելագույնս մոտ է բնագրին և կարելի է արտացոլում բնագրի թե՛ լեզվական, թե՛ գեղագիտական նրբերանգները:

Եվ ահա 1965 թվականին առաջին անգամ հայ իրականության մեջ հայտնվեց Ու. Ֆոլքները: «Հայաստան» հրատարակչությունը հրատարակեց «Լրիվ շրջադարձ» պատմվածքն առանձին գրքուկով՝ Ռաֆայել Արամյանի քարգնամությամբ5: Գրքուկը լույս է տեսել «Պատմվածքներ, 20-րդ դար» մատենաշարով հրատարակված մի շարք գրքերի հետ, որոնք խառնիխառն ներկայացնում են թե՛ հայ, թե՛ օտար գրականությունը: Գրքի շապիկի ներսակողմում հակիրճ ներկայացված է Ու. Ֆոլքների ստեղծագործության բնութագիրը, որն այսօր՝ տարիների հեռվից, լավագույնս հիշեցնում է «սատր պատերազմի» ժամանակաշրջանը, երբ հակոտնյա գաղափարախոսությունների բախումն արտացոլվում էր կյանքի բոլոր բնագավառներում՝ չխնայելով նաև գրականությանը: Ֆոլքներն ինքն անընդմեջ դժգոհում էր «սատր պատերազմի» գոյությունից և իր երկրում քանիցս դատապարտել է այն, մինչդեռ քարգնամված գրքուկի նույնիսկ մի քանի սեղմ բնորոշումներում արդեն առկա է աշխարհահռչակ գրողի ստեղծած շրջանակը նեղացնելու միտում. «Ու. Ֆոլքների ստեղծագործությունների ճնշող մասը պատկերում է նրա հայրենիքը՝ Ամերիկայի հարավը, ուր տիրապետող են հետադիմական տրամադրություններն ու ռասսայական դիսկրիմինացիան (ընդձեռն իմն է. - Դ. Հ.)»: Այո, Ֆոլքների ստեղծագործությունը իրավամբ պատկերում է ամերիկյան հարավը, իսկ ինչ վերաբերում է «տիրապետող հետադիմական տրամադրություններին ու ռասսայական դիսկրիմինացիային», ապա այս ձևակերպումն այն էր, ինչին դեմ էր Ֆոլքները, այսինքն՝ իր գրականության մեջ վիճարկել գաղափարների փողհարում: Գրողը բազմիցս խոստովանել է, թե իր գրականությունը մարդու մասին է, նրա սրտի մասին, որն ինքն իր հետ և իր շրջապատի հետ մշտնջենական պայքարի մեջ է:

Դառնանք քարգնամության գնահատմանը: Հիշենք, որ արձանագրելով քարգնամության գրապատմական փաստը, միշտ չէ, որ կարելի է մատնանշել նրա գեղարվեստական արժեքը: Թարգմանությունը կարող է գրական-գեղարվեստական արժեք դառնալ, եթե.

1. Այն առավելագույնս համապատասխանում է տվյալ գրական երկի գեղարվեստական արժանիքներին, այսինքն՝ համարժեքորեն լուծում է այն սկզբունքային խնդիրները, որոնք առաջադրել և լուծվել են հեղինակն իր բնագրում.

ա) լեզվա-ոճական երանգների ինքնատիպ գործածություն

բ) երկի ձևի և բովանդակության համապատասխանություն

2. Հաղորդելով երկի գեղարվեստական արժանիքները՝ քարգնամող լեզվում լավագույնս

հարազատորեն է ներկայացնում նրա լեզվամտածողությունն ու բառային-շարահյուսական արտահայտչամիջոցների կիրառությունը:

Հավաքելով և ի մի բերելով Ու. Ֆոլքների երկերի հայերեն քարգնամությունների բոլոր գրական փաստերը՝ մեր ուսումնասիրություններն, ի վերջո, կհանգեն դրանց բոլորի արժեքորմանը և, ընդհանուր առմամբ, Ֆոլքների երկերի հայերեն բոլոր քարգնամությունների մանրամասն վերլուծմանը՝ գեղարվեստական գրականության քարգնամական արվեստի վերոնշյալ սկզբունքներին համապատասխան: Իսկ առայժմ սահմանափակվենք «Լրիվ շրջադարձ» պատմվածքի քարգնամության արժեքորմամբ:

«Լրիվ շրջադարձ»-ի քարգնամությունը գրական անուրանալի փաստ է, և հարկ է ըստ արժանվույն գնահատել քարգնամիչ ներդրումը ֆոլքներյան քարգնամությունների դժվարին գործում՝ առանձնակի շեշտելով, որ, եթե հայ քարգնամիչները գրեթե չորս տասնամյակ ետ մնացին աշխարհի տարբեր ծագերում սկսված (Եվրոպա, Ճապոնիա, Ռուսաստան) ֆոլքներյան երկերի քարգնամության գործից, ապա 60-ական թվականներին այդ բացը լրացվեց Ռաֆայել Արամյանի ազնիվ ջանքով, որը հայ քարգնամական դպրոցում Ու. Ֆոլքների առաջին քարգնամիչն էր:

«Լրիվ շրջադարձ»-ի հայերեն քարգնամությունը կարդալիս անմիջապես աչքի է զարնում ռուսերենից քարգնամված լինելու փաստը: Դեռևս 1960 թվականին այս պատմվածքն արդեն քարգնամվել էր ռուսերեն և հրատարակվել6: Անշուշտ, այս գրական իրողությունը չէր կարող հիմք հանդիսանալ այն պնդման համար, թե հայերեն քարգնամությունն անպայման կատարվել է ռուսերենից: Այս եզրակացությանը կարելի է հանգել միայն պատմվածքի հայերեն քարգնամության մանրագին ռուսումնասիրությունից հետո: Թարգմանությունն ընթերցելիս նկատվում է գեղեցիկ և ճշգրիտ հայերենի գործածության ճիգը, սակայն տեղ-տեղ հանդիպում են բառային և կառուցվածքային անճշտություններ, որոնք ակնհայտորեն ռուսերենից պատճենելու արդյունք են: Բերենք մի քանի օրինակներ. «Ինչպես որ հարկն է տարեց մարդուն» (էջ 3) մախադասությունը հայերեն ավելի ճիշտ կհնչեր հետևյալ կերպ. «Ինչպես վայել է տարեց մարդուն (տարեցին)», կամ՝ «Իր հանդեպ կանգնած այս երկու գինվորականներից մեկն ընդհանրապես հազիվ թե կարողանար տեսնել նրան» (էջ 4) մախադասության մեջ ճիշտ կլիներ «իր դիմաց (առջև) կանգնած» ձևը, մի այլ օրինակում՝ «-Գլուխդ իջեցրեք և ետ տվեք» (էջ 25) կա քերականական անճշտություն, ճիշտ է «գլուխը իջեցրեք» ձևը, իսկ «Նրանք Մակ-Ջիննիսի հետ պագել էին իրար հանդեպ ու հայում էին շների նման» (էջ 30) մախադասության մեջ սխալ է գործածված «հանդեպ» բառը, որը կարելի է փոխարինել «դիմաց» բառով, «Նավակի միջի երկու նավաստիները ոտքի ելան ու պատիվ տվին» (էջ 39) մախադասության մեջ սխալ է գործածված «պատիվ տալ» բառակապակցությունը, այն բյուրիմացաբար փոխարինում է «պատվի առնել» արտահայտությանը, ուստի պետք էր քարգնամել «Նավակի միջի երկու նավաստիները ոտքի ելան ու պատվի առան»։ Հետաքրքիր է, որ մի այլ տեղ քարգնամիչը ճիշտ է գործածել նույն բառակապակցությունը. «Օրորվելով ձեռքը գցեց ոստիկանի պարանոցին, իսկ մյուսով ծանրորեն պատվի առավ...» (էջ 5), «Այժմ, երբ կռիվ է գնում, ի՞նչ զբոսանքի ժամանակ է:» (էջ 48) մախադասությունը 16-ամյա գինվորի խոսք է, ուստի «այժմ»-ի փոխարեն հայերենի խոսակցական շերտի «հիմա» բառի գործածությունն ավելի տեղին կլիներ, իսկ «կռիվ է գնում» կապակցությունը ռուսերենից սոսկ արտատպված ձև է - «идет бой», որը կարելի է փոխարինել «Հիմա կռիվ է, զբոսանքի ժամանակ չի» ձևով:

Թարգմանության մեջ նկատելի են նաև մի շարք ռուսերեն բառերի կադապարային գործածություններ, որոնցով անտեսվել են համապատասխան հայերեն համարժեքները: Օրինակ՝ անգլերեն «overall» բառը ռուսերեն քարգնամվում է «комбинезон», իսկ հայերեն՝ «արտահագուստ, բանվորական շալվար, խալաթ», քարգնամիչը գործածել է «կոմբինեզոն» բառը (էջ 22), քանիցս գործածվել է «մոտոր» բառը, (էջ 9, 21, 32), որն անգլերեն «engine, motor» բառի քարգնամությունն է ռուսերեն, մինչդեռ հայերենում կա շատ գործածական «շարժիչ» բառը, «էսկադրիլյա» բառը (էջ 30) անգլերեն «squadron» բառի ռուսերեն քարգնամությունն է, որն արտատպման եղանակով գործածվել է հայերենում, մինչդեռ կարելի է գործածել հայերեն «սավառնակախումբ» բառը, անգլերեն «fuselage» բառը ռուսերեն քարգնամվում է «фюзеляж»: Թարգնամիչը նույնպես գործածել է «ֆյուզելաժ» բառը (էջ 25)՝ փաստորեն անտեսելով «նկարագրական» բնույթի հակիրճ քարգնամական համարժեքը՝ «ինքնաթիռի կմախք, հենք»-ը: Քանի որ «fuselage»-ը տեխնիկական տերմին է, ուստի այն քարգնամելիս ավելի ճիշտ է օգտվել հենց «նկարագրական» քարգնամական եղանակից:

Անգլերեն «trawler» բառը ռուսերեն «тралер» է: Թարգնամիչը նույնպես գործածել է «տրաուլեր» բառը (էջ 49)՝ օգտվելով հնում քարգնամական դպրոցներում հաճախ կիրառվող «տրանսլիտերացիա - տառադարձում» ձևից, որի էությունն է օտարալեզու բառի տառային փոխադրումը քարգնամող լեզու: Մինչդեռ ժամանակակից քարգնամական դպրոցներում շատ

